# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 նոյեմբերի 2023 թվականի N 482-Ա**

**«ՊՈՂՈՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԵՐՄԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ՍՈՆԱ ԹԵՎԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Հերմինե Պողոսյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Հերմինե Պողոսյանին 2023 թվականի նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 15-ը ներառյալ տրամադրել 2022-2023 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը՝ 15 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Սոնա Թևանյանին:

23.11.2023

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2023թ.նոյեմբերի 23
ք. Կապան